# Հասանելի կդառնա յուրաքանչյուր գիտնականի

## Հայկական վիրտուալ գրադարանը հայ գիտնականներին կմոտեցնի համաշխարհային մտքին

Նորաստեղծ «Հայկական վիրտուալ գիտական գրադարանը» Հայաստանի գիտնականներին եզակի հնարավորություն կտրամադրի «մեկ պատուհանի» սկզբունքով իրենց հասանելի դարձնել առցանց գիտական ամսագրերն ու շտեմարանները: Հենց այս ծրագրի շնորհանդեսը նոյեմբերի 29-ին կայացավ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայում: Վերջինիս նախագահ **Ռադիկ Մարտիրոսյանը** կարեւորեց այն հանգամանքը, որ ծրագիրը հնարավորություն կտա հայ գիտնականներին ոչ միայն ծանոթանալ համաշխարհային գիտական մտքին, այլեւ իրենց աշխատությունները ներկայացնել համաշխարհային հանրությանը: *«Գրադարանի միջոցով հնարավորություն կտրվի գտնել համապատասխան գրականություն՝ առանց ժամանակ վատնելու»*,–ասաց նա:




ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ **Սամվել Հարությունյանը** նշեց, որ ծրագիրն էապես կհեշտացնի գիտական գրականության հասանելիությունը յուրաքանչյուր գիտնականի համար: *«Սա հնարավորություն կտա հեշտացնել մեր հարաբերությունների ձեւավորումը արտասահմանյան գործընկերների հետ»*,–կարեւորեց Սամվել Հարությունյանը:

ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան **Ջոն Հեֆերնը** հավաստիացրեց, որ գիտությունը եւ տեխնոլոգիական ոլորտները իրենց համար գերակա են, եւ փորձում են Հայաստանում գործընկերներ գտնել, որոնք աշխատում են այդ ասպարեզում:

Դեսպանը նաեւ նշեց, որ իրենք ակնկալում են խորացնել համագործակցությունը ԿԳՆ-ի եւ ԳԱԱ-ի հետ:

*«Ծրագրի միջոցով հնարավոր կդառնա գրականության եւ տեղեկատվության երկկողմ փոխանակում: ԱՄՆ դեսպանությունը շատ բարձր է գնահատում նմանատիպ համագործակցությունը»*,–ասաց Ջոն Հեֆերնը:

Այժմ գրադարանը ներառում է ավելի քան երեք մլն հոդված, ավելի քան ութ հազար ամսագիր՝ հայերենով, ռուսերենով եւ անգլերենով:

*Արմենպրես*